

ՄԱՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՉՈՐՍ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Դեկտեմբերի 18-ին, չորեքշաբթի օրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ մասնավոր վարդապետական իշխանության չորս աստիճանների տվչություն: Ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Կանադայի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Հովնան եպս. Տերտերյանը, համաձայն Ձեռնադրության Մաշտոցի, վարդապետական չորս աստիճաններ շնորհեց Ս. Էջմիածնի միաբաններ Տ. Սիոն աբեղա Ադամյանին և Տ. Վրթանես աբեղա Աբրահամյանին: Երկու երիտասարդ միաբանները Իջման Ս. Սեղանի առջև ուխտի կանգնեցին՝ նորոգվելու համար նոր շնորհներով:

Ձեռնադրության Մաշտոցի վկայությամբ, մասնավոր վարդապետական աստիճանի տվչության արարողակարգը սահմանել է եռամեծար վարդապետ Ս. Գրիգոր Տաթևացին: Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու նվիրական կարգի համաձայն մասնավոր վարդապետական չորս աստիճան ստացած հոգևորականն է, որ իրավունք ունի քարոզելու և ուսուցանելու Քրիստոսի Ավետարանի ճշմարտությունները:

Վարդապետական տվչության սրտառուչ արարողության ընթացքին կարդացվեցին չորս Ավետարաններ, աղոթքներ, երգվեցին սրբազան շարականներ ու մեղեդիներ:

Հավարտ արարողության Տ. Հովնան եպս. Տերտերյանը բարեմաղթանքի և շնորհավորանքի խոսք հղեց նորընծա վարդապետներին:

Նորընծաները ներկայացան Վեհափառ Հայրապետին՝ ստանալու նրա հայրական օրհնությունը: Նորին Սրբությունը շնորհավորելով վարդապետներին մաղթեց, որ նրանք այսուհետև ևս աներկբա հավատով ու նվիրումով շարունակեն իրենց ծառայությունները Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և հավատավոր հայ ժողովրդին: Այս նվիրական առիթով Հայոց Հայրապետը նրանց վարդապետական լանջախաչեր պարգևեց:

Տ. Սիոն և Տ. Վրթանես վարդապետները սովորել և ավարտել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանը: Այնուհետև Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ իրենց ծառայությունն են սկսել, առաջինը՝ Բուլղարիայի

Վառնա քաղաքում և երկրորդը՝ Արցախի թեմում: Այժմ ևս նորընծա վարդապետներն իրենց հոգևոր ծառայությունն են մատուցում մեր ժողովրդին՝ հիշյալ վայրերում:

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս շնորհավորում է նորընծա վարդապետներին՝ մաղթելով, որ նրանք իրենց նվիրումով և հոգևոր ուխտի բարձր գիտակցությամբ արժանավոր հետևորդները դառնան Հայ Եկեղեցու լուսամիտ վարդապետների: